ԵՐԵՎԱՆԻ ԱՎԱԳԱՆՈՒ «ՄԱՅՐ ՀԱՅԱՍՏԱՆ»
ԽՄԲԱԿՑՈՒԹՅԱՆ ՂԵԿԱՎԱՐ ՄԱՆՈՒԿ ՍՈՒՔԻԱՍՅԱՆԻՆ

Հարգելի՛ պարոն Սուքիասյան,

ի պատասխան Ձեր 25.07.2024թ. հ. 209-2024թ. գրության՝ տեղեկացվում է, որ ՀՀ «Ճանապարհային ոստիկանություն» ծառայությանն ուղղված հարցմանն ի պատասխան տրամադրվել է ՀՀ-ում հաշվառված էլեկտրամոբիլների վերաբերյալ տվյալները, որոնք ուսումնասիրվել են աշխատակազմի տրանսպորտի վարչության կողմից և որպես վառելիք բացառապես էլեկտրաէներգիա օգտագործող և բացառապես էլեկտրական շարժիչով աշխատելու վերաբերյալ ավտոտրանսպորտային միջոցների ցանկը 29.01.2024թ. հրապարակվել է yerevan.am պաշտոնական կայք էջում՝ հայտարարություններ բաժնում:

Միաժամանակ տեղեկացվում է, որ անկախ վերը նշված հանգամանքից «Փարկինգ սիթի սերվիս» ՓԲ ընկերությունը համապատասխան տվյալները ՀՀ «Ճանապարհային ոստիկանություն» ծառայության ռեգիստրից ստանալու միջոցով համակարգում դիտարկում է բացառապես էլեկտրաէներգիա օգտագործող և բացառապես էլեկտրական շարժիչով աշխատելու վերաբերյալ տվյալների առկայությունը և ավտոտրանսպորտային միջոցի սեփականատերն օգտվում է Երևանի ավագանու 26.12.2023թ. հ.45-Ն որոշմամբ սահմանված արտոնությունից:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆ